51. Տնօրենների Խորհրդի նիստերը հրավիրվում են Տնօրենների Խորհրդի Նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում առաջին փոխնախագահի կամ նաև Գործադիր Տնօրենի նախաձեռնությամբ՝ այդ մասին հինգ օր առաջ ծանուցելով Տնօրենների Խորհրդի անդամներին: The meetings of the Board of Directors shall be convened by the President of the Board of Directors, or in case of the latter's absence, by the initiative of the First Vice-President or the Executive Director, by notifying the Members of the Board of Directors thereof at least five days prior to the Meeting.
52. Տնօրենների Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Տնօրենների Խորհրդի անդամների կեսից ավելին: The Board of Directors' Meeting shall reach quorum if it is attended by more than half of the Members of the Board of Directors.
53. Տնօրենների Խորհրդի նիստերին առանց քվեարկելու իրավունքի մասնակցում են Գործադիր Տնօրենը և Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչը: The Executive Director and the representative of the U.S. Embassy in the Republic of Armenia shall attend the meetings of the Board of Directors as non-voting Members.
54. Տնօրենների Խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգն ընդունվում է Տնօրենների Խորհրդի կողմից: The procedure for holding Meetings of the Board of Directors shall be approved by the Board of Directors.
55. Տնօրենների Խորհուրդը որոշումներ է ընդունում Տնօրենների Խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ՝ այն բոլոր հարցերով, որոնք վերապահված չեն Պալատի կառավարման մյուս մարմիններին, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ սահմանված հարցերով: The Board of Directors adopts decisions by the majority of the votes of all the members of the Board of Directors, on all the issues that are not reserved to the other governing bodies of the Chamber, as well as on the issues defined by this Charter.

X.

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

FUNCTIONS OF THE EXECUTIVE BODY

56. Գործադիր Տնօրենը հանդիսանում է Պալատի գործադիր մարմինը և նշանակվում է Տնօրենների Խորհրդի կողմից 10 տարի ժամկետով: The Executive Director is the executive body of the Chamber and is appointed by the Board of Directors for a period of 10 yearsn .
57. Գործադիր Տնօրենը ղեկավարում է Պալատի ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Կանոնադրության, Ժողովի The Executive Director manages the current activities of the Chamber, as well as in accordance with Republic of Armenia legislation, the Charter,

և Տնօրենների խորհրդի որոշումներին համապատասխան.

and the decisions of the Meeting and Board of Directors:

- 1) ապահովվում է ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը, ensures the implementation of decisions made by the Meeting and Board of Directors,
- 2) տնօրինում և կառավարում է Պալատի ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Պալատի անունից, manages and administers the Chamber's assets of any type and size, including financial means, conclude transactions on behalf of the Chamber,
- 3) ներկայացնում է Պալատը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, represents the Chamber in the Republic of Armenia and in foreign countries,
- 4) տալիս է լիազորագրեր, grants powers of attorney,
- 5) բանկերում բացում է Պալատի հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ, opens settlement accounts (including foreign currency) and other bank accounts,
- 6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, issues orders, commands within his/her competence, gives binding instructions for execution, and exercises supervision over their implementation,
- 7) Տնօրենների խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի աշխատակազմի հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը, approves the reimbursement terms of the Chamber's employees and the annual expenditure estimate upon the approval of the Board of Directors,
- 8) Տնօրենների խորհրդի համաձայնությամբ հաստատում է Պալատի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին և այլ կարգապահական կանոնները, approves the internal documents regulating the Chamber's activities, including those for separate units, internal disciplinary and other rules upon the agreement of the Board of Directors,
- 9) հաստատում է Պալատի հաշվետվությունները՝ Տնօրենների խորհրդին և ժողովին ներկայացնելու նպատակով, approves the reports of the Chamber and its bodies for submission to the Meeting or the Board of Directors,
- 10) հաստատում է և Տնօրենների խորհրդին և ժողովին է ներկայացնում ժողովների գումարմանը նախորդող տարիների Պալատի գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, submits to the approval of the Meeting and the Board of Directors the annual reports on the Chamber's assets use and the Chamber's activities of the years preceding the meetings,
- 11) Տնօրենների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Պալատի անդամության նախագահի կողմից ներկայացված թեկնածուների ցանկը, nominates candidates for membership in the Chamber for approval by the Board of Directors and suggests to terminate the memberships,

- թեկնածուներին և առաջարկում հեռացնել անդամությունից,
- 12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ: exercises other powers prescribed by this Charter and the legislation of the Republic of Armenia.

XI.

**ՊԱԼԱՏԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

**ASSETS OF THE CHAMBER AND SOURCES
OF THEIR FORMATION**

58. Պալատը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: The Chamber shall hold separated assets as its ownership and shall be liable for its obligations with those assets.
59. Պալատը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: The Chamber may have both movable and immovable property as its ownership, such as buildings, vehicles, equipment, funds, securities and other assets not prohibited by law.
60. Պալատի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել. The source for the formation of the assets of the Chamber may include:
- 1) Պալատի անդամների անդամավճարները և ներդրումները, membership fees and investments by the Chamber's Member,
 - 2) Պալատի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, funds from the entrepreneurial activities of the Chamber,
 - 3) Պալատի ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները, funds from other commercial organizations, which the Chamber established or holds share therein,
 - 4) Պալատի նպատակներին աջակցող դրամաշնորհները կամ grants or donations supporting the objectives of the Chamber,
 - 5) Հանգանակությունները, Fundraisings,
 - 6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ: other funds not prohibited by the legislation of the Republic of Armenia.
61. Պալատի միջոցները կարող են օգտագործվել բացառապես սույն կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: The funds of the Chamber may be used exclusively for the implementation of the goals and tasks defined by this Charter.

62. Տնօրենների Խորհրդի անդամի կողմից Պալատի գործունեության համար կամ կապակցությամբ իրականացված ծախսերը կարող են փոխհատուցվել Տնօրենների Խորհրդի որոշմամբ:
- Expenses incurred by a member of the Board of Directors for the activities of the Chamber may be subject to compensation by the decision of the Board of Directors.

XII. ՊԱԼԱՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

RESTRUCTURING AND LIQUIDATION OF THE CHAMBER

63. Պալատը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:
- The Chamber may be liquidated upon the Meeting's decision or court judgment.
64. Պալատը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
- The Chamber shall form the liquidation commission and determine the liquidation procedure and timeframes in a manner prescribed by law.
65. Պալատը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Պալատի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- In case of liquidation of the Chamber, the remaining property after satisfying creditors' claims is directed to the purposes stipulated by the charter of the Chamber, if this is not possible, funds are transferred to the state budget, and other property is transferred by right of ownership to the Republic of Armenia represented by the government, except in cases established by law.
66. Պալատը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:
- The Chamber can be reorganized by the decision of the Meeting or in the cases defined by the law, by the decision of the court, in accordance with the procedure defined by the law.

XIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

TRANSITIONAL PROVISIONS

67. Երկու հազար քսաներեք թվականին ընտրված Տնօրենների Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են երկու հազար քսանհինգ թվականին կազմակերպվելիք հերթական Ժողովի օրը, որում քվեարկության է դրվելու Տնօրենների Խորհրդի նոր կազմի ընտրության հարցը:
- In two thousand twenty-three the powers of the members of the Board of Directors will terminate on the day of the next general Meeting to be held in two thousand twenty-five, during which a vote will be held on the matter of electing a new composition of the Board of Directors
68. Մինչև երկու հազար քսանհինգ թվականը Տնօրենների Խորհրդի անդամ ընտրված
- Persons elected as members of the Board of Directors before two thousand twenty-five have the

անձինք իրավունք ունեն սույն կանոնադրության պահանջներին համապատասխան մասնակցել երկու հազար քսանհինգ թվականի ընտրություններին, նույնիսկ այն դեպքում, եթե նրանք նախկինում արդեն իսկ երկու անգամ զբաղեցրել են Տնօրենների հորհրդի անդամի պաշտոնը:

right to participate in the elections of two thousand twenty-five in accordance with the requirements of this charter, even if they have previously held the position of a member of the Board of Directors twice.

69. Երկու հազար քսանհինգ թվականին Տնօրենների հորհրդի անդամ ընտրված յուրաքանչյուր անդամ կարող է դրանից հետո Տնօրենների հորհրդի անդամ ընտրվել ոչ ավել քան երկու անգամ անընդմեջ, որը ներառում է 2025 թվականին սկիզբ առած պաշտոնավարման ժամկետը:

Each member elected to the Board of Directors in the year two thousand twenty-five may thereafter be elected to the Board of Directors no more than twice consecutively, which included the term of office started in 2025.

70. Երկու հազար քսանհինգ թվականին Տնօրենների հորհրդի անդամների ընտրությունը կատարվում է հետևյալ կերպ. Նախագահն ու առաջին և երկրորդ փոխնախագահները ընտրվում են երկու տարի ժամկետով, Տնօրենների հորհրդի անդամների ընտրության քվեարկության արդյունքում առավել բարձր ձայներ ստացած երեք անդամները ընտրվում են երկու տարի ժամկետով, իսկ մնացած վեց անդամներն ընտրվում են մեկ տարի ժամկետով:

In the year two thousand twenty-five, the members of the Board of Directors are elected as follows:

The President and the first and second vice-presidents are elected for a two-year term. The three members who receive the most votes in the election of the members of the Board of Directors are elected for a two-year term, and the remaining six members are elected for a one-year term.

71. Երկու հազար քսանվեց թվականին պետք է կազմակերպվի մեկ տարով ընտրված Տնօրենների հորհրդի անդամների թափուր տեղերի ընտրություն, որում ընտրված անձինք պաշտոնավարում են երկու տարով:

In the year two thousand and twenty-six, there shall be organized an election for the vacancies of the members of the Board of Directors elected for one year, in which the elected persons shall hold office for two years.



ՀՀ վարչապետ պրն. Տիգրան Խաչատրյանին
«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ
նախագահ Էլինա Մարկարյանից

Հարգելի պրն. Խաչատրյան,

ՀՀ վարչապետի գլխավորությամբ գործարար համայնքի հետ «Հայաստանի տնտեսական մրցունակության բարձրացումը քաղաքականությունների և վարչարարության բարելավման միջոցով» խորագրով հաջորդ՝ 2025 թվականի աշնանը կայանալիք աշխատաժողովի համար «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ-ն (ԱԱՊՀ) առանձնացրել է մի շարք խնդիրներ իրենց հնարավոր լուծումներով: Տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ սույն թվականի հունիսի 23-ին ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանի և ԱԱՊՀ տնօրենների խորհրդի միջև տեղի է ունեցած հանդիպման ընթացքում, նախապես բարձրացվել են ստորև ներկայացված մի շարք հարցեր և նախանշվել են համապատասխան գործողություններ՝ համատեղ աշխատանքը արդյունավետ իրականացնելու նպատակով: Մասնավորապես՝

1. Կրկնակի հարկման բացառում

Խնդիր. Խորհրդային Միությունը և Միացյալ Նահանգները 1973 թվականի հունիսի 20-ին Վաշինգտոնում ստորագրեցին եկամտային հարկի մասին կոնվենցիա: Խորհրդային Միության փլուզումից հետո մի քանի նորաստեղծ պետություններ ԱՄՆ-ի հետ ստորագրեցին եկամտային հարկի նոր պայմանագրեր, որոնք ուժի մեջ են: ԱՄՆ-ն շարունակում է կիրառել ԱՄՆ-Խորհրդային Միության հարկային պայմանագիրը Անկախ պետությունների համագործակցության մի շարք այլ անդամների, այդ թվում՝ Հայաստանի հետ հարաբերություններում: Սակայն պայմանագիրը չի կիրառվում Հայաստանի Հանրապետության կողմից, ինչը հանգեցնում է լուրջ հետևանքների, երբ հարկ վճարողը պետք է վճարի նաև եկամտային հարկ ԱՄՆ-ում արդեն հարկված նույն գումարից:

Հնարավոր լուծում (կարճաժամկետ և երկարաժամկետ). Հայաստանի Հանրապետությունը կարող է ճանաչել և կիրառել ԽՍՀՄ հարկային (նման ընթացակարգը պետք է լինի ՀՀ

արտաքին գործերի նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության հետ խորհրդակցության առարկա՝ որպես խնդրի կարճաժամկետ լուծում, մինչդեռ միջնաժամկետից երկարաժամկետ նպատակը նոր հարկային պայմանագրի ստորագրումն է:

Այս խնդրի վերաբերյալ ԱԱՊՀ-ն տրամադրել է տեղեկանք ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ խնդրի լուծումը ՀՀ օրենսդրական դաշտում դիտարկելու նպատակով: ԱՄՆ դեսպանատունն իր հերթին կտրամադրի ԱՄՆ կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

2. Երկկողմ առևտրային հարաբերությունների և ԱՄՆ-ից ներդրումների հոսքը խթանելու գործուն մեխանիզմի բացակայություն

Խնդիր. Ներկայումս բացակայում է մասնագիտացված պատասխանատու մարմին՝ ԱՄՆ-ի և ՀՀ միջև երկկողմ առևտրային հարաբերությունների խթանման, ինչպես նաև ԱՄՆ-ից Հայաստան ներդրումների ներգրավման գծով:

Հնարավոր լուծում. Անհրաժեշտ է ներգրավել մասնագիտացված կառույցներ /կազմակերպություն կամ անհատ/, որոնք կարող են կատարել առևտրային կցորդի և ներդրումային գործակալի գործառույթները՝ ծառայելով որպես կամուրջ Հայաստանի և ԱՄՆ-ի միջև՝ համապատասխանաբար առևտրի, ներդրումների և բիզնեսի խթանման և ամրապնդման գործում: Տրամաբանական է առևտրային կցորդին տեղակայել արևմտյան ափին, մինչդեռ ներդրումային գործակալն ավելի նպատակահարմար է արևելյան ափին: Անհրաժեշտ է նաև ունենալ հստակ նպատակներով արտասահմանյան ուղղակի ներդրումների վերաբերյալ ազգային քաղաքականություն՝ Հայաստանի զարգացման ռազմավարությանը համապատասխան:

ԱԱՊՀ-ն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է տրամադրել է վերոհիշյալ պաշտոնների տեխնիկական նկարագրերը, կատարողականի ցուցիչները (KPI) և մոտավոր ընդհանրացված բյուջեն:

3. Հարկային բարեփոխումներին գործարար համայնքի ոչ բավարար ներգրավում

Խնդիր. Մասնավոր հատվածի ակտիվ մասնակցությունը հարկային բարեփոխումների մշակման գործընթացում կարևոր նախապայման է արդար, կանխատեսելի և թափանցիկ հարկային կարգավորումների ապահովման և նպաստավոր գործարար միջավայրի ձևավորման համար: Մակայն հաճախ նման քննարկումներն իրականացվում են առանց գործարար համայնքի տեսլականի ու ոլորտային փորձի համապարփակ ընդգրկման՝ առաջացնելով հավելյալ վերանայումների, կարգավորումների և շտկումների անհրաժեշտություն:

Հնարավոր լուծում. ԱԱՊՀ-ն, միավորելով տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում գործող ավելի քան 170 ընկերություններ, հանդիսանում է առանցքային գործընկեր բարեփոխումների

մշակման և իրականացման փուլերում: Հաշվի առնելով ԱԱՊՀ անդամ կազմակերպությունների ոլորտային փորձը, առաջարկում ենք հարկային բարեփոխումներին վերաբերող քննարկումների մաս դարձնել ԱԱՊՀ-ի մասնագիտացված հանձնաժողովներից մեկը՝ «Իրավական և հարկային հարցերով» հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահի: ԱԱՊՀ-ն կարող է հանդես գալ նաև որպես համակարգող՝ հավաքագրելով այլ գործարար միությունների նկատառումները և ներկայացնելով գործարար հատվածի համապարփակ կարծիքը:

Միննույն ժամանակ, ի հավելումս ՀՀ վարչապետի հետ քննարկված վերը նշված խնդիրների, կից հավելվածում Ձեզ ենք ներկայացնում ԱԱՊՀ անդամ կազմակերպությունների կողմից վերհանված և գործարար համայնքի համար կարևորություն ներկայացնող ա) հետազոտության համակարգի և բ) «Ներդրումների մասին» օրենքի նախագծին վերաբերող խնդիրները՝ իրենց հնարավոր լուծումներով:

Հայցում ենք Ձեր աջակցությունը ներկայացված խնդիրների լուծման հարցում: Անհրաժեշտության դեպքում, պատրաստ ենք վերոնշյալ նյութի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրել:

Հարգանքով՝

Էլինա Մարկարյան

«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ տնօրենների խորհրդի նախագահ



ՀԱՎԵԼ ՎԱԾ.

1. Հայաստանում Ամերիկյան Առևտրի Պալատը ՀԿ-ի խնդիրներ և հնարավոր լուծումներ «Ներդրումների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

1. Ներդրումների սքրինինգի մեխանիզմի բացակայություն

Խնդիր. Օրենքի նախագծի առկա տարբերակում ուղղակի օտարերկրյա ներդրումների (FDI) սքրինինգի վերաբերյալ նոր դրույթներ չեն ավելացվել: Օրենքը շարունակում է մնալ՝ պահպանելով «բաց դռների» ռեժիմը՝ բացառությամբ որոշ ոլորտային սահմանափակումների (օր.՝ հող, լրատվամիջոցներ):

Հնարավոր լուծում. Օրենքով անհրաժեշտ է սահմանել ազգային անվտանգության և ռազմավարական ոլորտների համար նախատեսված սքրինինգի գործընթաց՝ արտաքին ներդրումների համար:

2. Համապատասխանության բացակայություն բազմազգ կազմակերպություններին (multinational companies/corporations - MNCs) ուղղված ռազմավարությանը

Խնդիր. Օրենքի նախագծում բազմազգ կազմակերպությունների կամ խոշորածավալ/ ռազմավարական ներդրողների վերաբերյալ որևէ հղում չի ավելացվել: Արտոնությունների և ինստիտուցիոնալ դերերի վերաբերյալ դրույթները մնում են ընդհանուր՝ կիրառելի բոլոր ներդրողների նկատմամբ:

Հնարավոր լուծում. Հայաստանի ներդրումային քաղաքականության հայտարարությունում առաջնահերթություն է տրվում բազմազգ ընկերությունների ներգրավմանը, ուստի օրենքում անհրաժեշտ է ներառել համապատասխան նպատակային դրույթներ (ռազմավարական ներդրման սահմանում, խոշոր նախագծերի խթանում, ընդլայնված արտոնություններ):

3. Կայունության երաշխիքների սահմանափակ ծավալ

Խնդիր. Հոդված 13-ը պահպանում է 5 տարվա «ներդրողի պահանջով ներդրման նկատմամբ կիրառելի օրենսդրության»՝ ներդրման պահին գործող խմբագրության կիրառման» (grandfathering)-ի կանոնը: Ավելացվել է փոքր հստակեցում - 1994 թ. օրենքի ավելի բարենպաստ պայմանները մնում են կիրառելի ավելի հին ներդրումների համար՝ մինչև 5 տարի: Սակայն երկարաձգում 5 տարուց ավելի չի նախատեսվում, և նոր ներդրումների համար բացահայտ կայունացման պայմանագրեր չեն սահմանվում:

Հնարավոր լուծում. Կայունության երաշխիքները երկարաձգել 5 տարուց ավելի կամ թույլատրել անհատական կայունացման պայմանագրեր:

4. Ինստիտուցիոնալ շրջանակ և «մեկ պատուհան» սկզբունքի հստակեցում

Խնդիր. Առկա նախագծում ինստիտուցիոնալ հստակությունը որոշ չափով բարելավվել է, սակայն գործնական համակարգում ու «մեկ պատուհան» սկզբունքի լիազորությունը շարունակում են անորոշ մնալ.

- Հոդված 17-ը այժմ ավելի հստակ տարբերակում է Կառավարությունը, «Լիազոր մարմինը» և «Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամը» (Enterprise Armenia):
- Հոդված 18-ը սահմանում է Կառավարության դերը՝ միջին և երկարաժամկետ ներդրումային քաղաքականության, ներդրումային քաղաքականության հայտարարության և համակարգման մեխանիզմների հաստատման մեջ:
- Հոդված 19-ը հստակեցնում է Լիազոր մարմնի պարտականությունները (քաղաքականության մշակում, նախագծեր, թարմացումներ):
- Հոդված 20-ը ամրապնդում է Կենտրոնի գործառույթների նկարագրությունը, սակայն այն մնում է լայնածավալ (խորհրդատվություն, օժանդակություն, խթանում):

Հնարավոր լուծում. Հստակեցնել «Լիազոր մարմին» և Ներդրումների աջակցության կենտրոնի դերը, ինչպես նաև ներկայացնել «մեկ պատուհան» գործառույթների համակարգման մեխանիզմները:

5. Խթաններ – Կառավարում և թափանցիկություն

Խնդիր. Թարմացված օրինագծում թափանցիկությունը բարելավվել է ռեգիստրի պահանջի շնորհիվ, սակայն մանրամասն չափանիշների և շահառուների հրապարակման պարտադիր դրույթներ չեն նախատեսվել:

- Հոդված 14-ը սահմանում է խթանների տեսակներն ու սկզբունքները, ներառյալ՝ չտարբերակման, համաչափության, չափելիության և հաշվետվողականության:
- Հոդված 15-ը այժմ թույլ է տալիս, որ խթանները տրամադրվեն ոչ միայն օրենքով կամ կառավարության որոշմամբ, այլև պետության հետ կնքված ներդրումային պայմանագրերի միջոցով:

- Հոդված 16-ը պարտադրում է Լիազոր մարմինն պահպանել բոլոր խթանների հանրային ռեգիստր:

Հնարավոր լուծում. Պահանջել իրավասության հստակ չափանիշներ, միատեսակ կիրառում և հրապարակային հաշվետվություն: :

II. **«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ կողմից վերհանված խնդիրներ և հնարավոր լուծումներ՝ կապված հետազոտչության համակարգի հետ¹**

Ընկերության կողմից նույնականացման միջոցներով ապրանքների պիտակավորման պարտավորության իրականացման ընթացքում գործնականում ի հայտ են գալիս բիզնեսի վրա էական բացասական ազդեցություն ունեցող խնդիրներ՝ ինչպես համակարգի կիրառելիության և ճկունության, այնպես էլ կողերի պաշտպանվածության ու տպագրման հետ կապված: Մասնավորապես՝

1. Խնդիր. Շուկայում գոյություն ունեցող շատ սահմանափակ քանակով ավտոմատացում ապահովող ծառայություն մատուցողները, որոնք պատասխանատու են ընկերության մոտ համակարգի տեղադրման և հետագա սպասարկման համար արտադրական հոսքագծերի, փաթեթավորման հոսքագծերի կամ այլ բիզնես պրոցեսների շրջանակներում, տրամադրում են յուրաքանչյուր ընկերության համար իրենց կողմից մշակված յուրահատուկ լուծում: Մասնավորապես, համակարգ տեղադրող ընկերությունները օգտագործում են ոչ ստանդարտացված ծրագրեր, սարքավորումներ ու համակարգեր, որոնք խնդիրներ են առաջացնում Ընկերության ավտոմատացված բարձր արագությամբ արտադրական հոսքագծերի վրա, չեն սինխրոնիզացվում առանց արտադրական պրոցեսին փաստելու E-mark համակարգի հետ՝ առաջացնելով կանգառներ և արտադրական արդյունավետության անկում և/կամ պահանջում են հոսքագծերի մոդեռնիզացիա, որը կարող է շատ ծախսատար լինել ընկերության համար: Անհնար է սահուն անցում իրականացնել մեկ սպասարկող կազմակերպությունից մեկ ուրիշին, քանի որ ամբողջ պրոցեսը կարող է պահանջել փոփոխություն, ներառյալ սարքավորումների, ծրագրերի փոփոխություն, աշխատակիցների վերապատրաստում, անհրաժեշտության դեպքում հոսքագծի վրա փոփոխության իրականացում, ինչը էական ծախսեր և բիզնես ռիսկեր կարող է առաջացնել Ընկերության համար: Ինչպես նաև, վերոնշյալ խնդիրներով պայմանավորված շատ է բարդանում միաժամանակ մի քանի նման մատակարարի հետ աշխատանքը, քանի որ նույն գործընթացի համար անհրաժեշտ է կիրառել տարբեր ծրագրեր, մոտեցումներ, վերահսկողական միջոցառումներ:

¹ Մասնավորապես, կապված նույնականացման միջոցներով ապրանքների պիտակավորման ներդրման (կետ 1-8) և դրոշմավորման հետ (կետ 9):

Հնարավոր լուծում. Առաջարկում ենք ստանդարտացում ծրագրերի և կիրառվող սարքավորումների համար:

2. Խնդիր. E-mark համակարգը հաճախակի աշխատում է խափանումներով, դանդաղ, տրամադրված տեղեկությունը անմիջապես չի մշակվում, ինչը բերում է վերահսկողական մեխանիզմների բարդացման (օրինակ՝ չի ստացվում նույն պահին համապատասխանեցնել օգտագործվող ծարգրի տվյալները E-mark համակարգի տվյալների հետ), ինչպես նաև համակարգը չի պարունակում անհրաժեշտ տեղեկատվություն (օրինակ՝ պիտակների մնացորդի վերաբերյալ տվյալի բացակայություն, եղել են դեպքեր, երբ նույն ժամանակաշրջանի համար մականշված կողերի քանակը փոփոխվել է):

Հնարավոր լուծում. Լավարկել E-mark համակարգի ֆունկցիան՝ վերահսկողական մեխանիզմների կիրառման բարդացումից խուսափելու համար:

3. Խնդիր. Առկա է ստանդարտացման մեխանիզմների բացակայություն տպագրական գործունեություն իրականացնող անձանց համար, ինչպես նաև հսկիչ (նույնականացման) նշանների տպագրության առանձնահատկություններով պայմանավորված անհրաժեշտ վերահսկողության բացակայություն: Տպագրական դեֆեկտները հնարավոր չէ կանխել արտադրական գործընթացների ժամանակ, և ընկերությունները ստիպված են վերապիտակավորել այդ արտադրանքը, առաջացնելով հավելյալ արտադրական և լոգիստիկ ծախսեր:

Հնարավոր լուծում. Մշակել տպագրատների համար կիրառելի ընթացակարգեր, անհրաժեշտության դեպքում ծրագրեր և հաշվետվությունների տեսակներ՝ տպագրական գործընթացները բարելավելու համար:

4. Խնդիր. E-mark համակարգում առկա չէ լիազորությունների տրամադրման (վերալիազորման) անհրաժեշտ գործիքակազմ, որպեսզի հնարավոր լինի միաժամանակ աշխատել մի քանի ծրագրային սպասարկում իրականացնող մատակարարների հետ: Առկա չէ հնարավորություն տարբեր ծառայություն մատուցողների տրամադրել սահմանափակ հասանելիության հնարավորություն, ինչի արդյունքում Ընկերության բիզնես ռիսկերը անկառավարելի են դառնում, ողջ բիզնես գաղտնիք հանդիսացող տեղեկություններն ամբողջությամբ հասանելի են դառնում ցանկացածին, ում պետք է հասանելիություն տրամադրել ծրագրին՝ ծառայություն ստանալու նպատակով: Ընկերությունը համակարգում չունի պատշաճ գործիքակազմ՝ վերահսկելու, թե լիազորված անձանցից ով ինչ գործողություններ է կատարել համակարգում, հայտնաբերելու թույլ տրվող հնարավոր սխալները, մի ծառայություն մատուցողի կողմից մյուս ծառայություն մատուցողին վերաբերող տվյալների փոփոխումը կամ խեղաթյուրումը, ինչն աշխատանքը E-mark համակարգով դարձնում է անհնար:

Հնարավոր լուծում. Կատարել համապատասխան բարելավումները E-mark համակարգում: Տրամադրել օգտատերերին ավելի դետալային թույլտվություններ, ինչպես օրինակ՝ <https://file-online.taxservice.am> կայքում:

5. Խնդիր. Օրենքով սահմանված չէ համակարգի սերվերների առկա տեղեկատվությունն անվաս և ամբողջ ծավալով պահպանման ժամկետները և պայմանները, ինչը ևս ստեղծում է անկառավարելի բիզնես ռիսկեր. իրավասու մարմինների կողմից հետագայում կատարվելիք ստուգումների ժամանակ այդ ամբողջ տեղեկատվությունն անհրաժեշտ է լինելու, սակայն այս պահին Ընկերությունն ապահովագրված չէ, որ դա առկա կլինի, օրինակ, երեք տարի հետո:

Հնարավոր լուծում. ՀՀ օրենսդրությամբ հաշվապահական փաստաթղթերը պետք է պահպանվեն 5 տարի: Կարծում ենք տվյալ պարագայում այս տեսակի տեղեկատվության համար անհրաժեշտ է սահմանել համապատասխան տեղեկատվության պահպանման ժամկետներ:

6. Խնդիր. Խմբային վերագրման գործող լուծումներ խոշոր ծավալի ներմուծման պարագայում առկա չեն: Ներկա պահին ներմուծվող ապրանքների պիտակավորումը իրականացվում է ձեռքով, մեծ ծավալների պարագայում մարդկային գործոնը կարող է բերել սխալների հավանականության և համապատասխանաբար տրամադրվող ծառայության գնի էական բարձրացմանը: Խմբային ագրեգացիան կարող է պահանջել մեքենայացված լուծումներ, որը կարող է խոշոր չափերի ներդրումներ պահանջել հարկ վճարողներից:

Հնարավոր լուծում. Մշակել նման ծախսերի իրականացման խթանմանը ուղղված պետական աջակցության ծրագիր:

7. Խնդիր. Հաշվի առնելով, որ նույնականացման միջոցներով ապրանքների պիտակավորման գործընթացը պահանջում է հատուկ մասնագիտացում ունեցող կազմակերպությունների ներգրավում՝ պատվիրատու կազմակերպությունը կարող է չունենալ համապատասխան միջոցներ և որակավորում կատարողի կողմից մատուցվող ծառայությունների որակի վերահսկման համար, սակայն օրենքով նախատեսված սանկցիան կիրառվում է պատվիրատուի նկատմամբ:

Հնարավոր լուծում. Կարծում ենք անհրաժեշտ է տալ օրենսդրական կարգավորումներ, սխալի/խախտման արդյունքում պատասխանատվությունը համապատասխան կատարող ընկերությունների վրա տեղափոխելը հնարավոր դարձնելու համար, ինչպես նաև սահմանել նման ընկերությունների համար մինիմալ պահանջներ (օրինակ՝ նվազագույն գուտակտիվների չափ և այլն):

8. Խնդիր. Նույնականացման միջոցներով ապրանքների պիտակավորման գործընթացը ընկերությունների մոտ արտադրման, պահպանման և մատակարարման բոլոր փուլերում առաջացնում է խոշոր չափերի ներդրումների, հավելյալ ծախսերի և հավելյալ աշխատանքի կարիք: Հետևաբար նույնականացման միջոցներով ապրանքների պիտակավորման

գործընթացը միանշանակ կհանգեցնի գների կտրուկ աճի և համապատասխանաբար կարող է առաջացնել մի շարք բիզնես ռիսկեր:

Հնարավոր լուծում. Կարծում ենք, որ տվյալ պարագայում անհրաժեշտ է դիտարկել նման ծախսերի հետևանքների հարկային քաղաքականությամբ չեզոքացման տարբերակներ, օրինակ՝ հարկերի դրույքաչափի իջեցում:

9. Խնդիր. 2024 թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը դրոշմավորման պահանջը տարածեց նաև տաքացվող ծխախոտի և էլեկտրոնային ծխախոտների վրա: Ընդ որում, պահանջը վերաբերում է նաև այն ապրանքներին, որոնք ներմուծվել են մինչև դրոշմավորման պահանջի ներդրումը՝ խաթարելով բիզնես միջավայրի կանխատեսելիությունը և առաջացնելով սահմանադրական հարցեր՝ կապված դրոշմավորման պահանջին հետադարձ ուժ տալու և տնտեսավարողների վիճակը վատթարացնելու հետ: Այս կարգավորումը առաջացնում է գործնական և իրավական լուրջ մարտահրավերներ, հատկապես տաքացվող ծխախոտի դեպքում, որը հաճախ վաճառվում է բլոկներով՝ տասը առանձին փաթեթներով: Դրոշմավորման պահանջը ենթադրում է, որ յուրաքանչյուր փաթեթ պետք է առանձին դրոշմավորվի, իսկ բլոկի վրա պետք է արտացոլվի միասնական ագրեգացված կոդ: Այս գործընթացը պահանջում է բացել բլոկի թափանցիկ փաթեթավորումը, ինչը ժառանգում է ապրանքի տեսքը, և դրա հետևանքով կարող է տուժել սպառողի վստահությունը՝ կապված ապրանքի իսկության հետ: Բացի այդ, մինչև դրոշմավորման պահանջի ներդրումը ներմուծված և շուկայահանված ապրանքի՝ դրա իրացման շուրջ 4000 կետերից հավաքագրումը առաջացնում է լոգիստիկ բարդություններ: Իսկ հետհավաքագրված տաքացվող ծխախոտի դրոշմավորումը ոչ արտադրական ցիկլով, այսինքն՝ առանց ավտոմատացված լուծումների և մարդկային ռեսուրսի ներգրավմամբ, առաջացնում է ֆինանսական բարդություններ: Այս ամենը, վաճառքի արգելքի պատճառով, կարող է հանգեցնել ապրանքի ոչնչացման՝ առանց ակցիզային հարկի վերադարձի:

Հնարավոր լուծում. Իրավաչափ և գործնական լուծում կլինի բացառել դրոշմավորման պահանջը այն ապրանքների նկատմամբ, որոնք ներմուծվել և շրջանառության մեջ են դրվել մինչև կարգավորման ուժի մեջ մտնելը:

**ՀՀ փոխվարչապետ
պրն. Մհեր Գրիգորյանին**

**ՀՀ փոխվարչապետ
պրն. Տիգրան Խաչատրյանին**

**Կրկնօրինակը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար՝
պրն. Գևորգ Պապոյանին**

Երևան, 18 օգոստոսի, 2025թ.

**Հարգելի՛ պարոն Գրիգորյան,
Հարգելի՛ պարոն Խաչատրյան,**

Հաշվի առնելով, որ «Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ-ն (այսուհետ՝ Պալատ) իր գործունեության ընթացքում հաճախ ներկայացնում է գործարար համայնքին հուզող ինստիտուցիոնալ խնդիրները և նպաստում պետություն-մասնավոր երկխոսության միջոցով դրանց լուծմանը՝ ներկայացնում ենք շինարարական ոլորտում ներդրումներ կատարած Պալատի անդամ-կազմակերպությունների մտահոգությունները՝ նպատակ ունենալով աջակցել տնտեսության շարունակական զարգացմանը և գործարար միջավայրի բարելավմանը:

Այժմ որպես օրվա հրատապ լուծում պահանջող խնդիր, կառուցապատողները ներկայացնում են «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, որոնցով սահմանվել են մեկնարկված, սակայն դեռևս ամբողջությամբ չկառուցված (անավարտ) շենքի համար անշարժ գույքի հարկի հաշվարկման իրավակարգավորումների վերաբերյալ փոփոխություններ: 2023 թվականի հունվարի 01-ից ուժի մեջ մտած այս կարգավորումն անկանխատեսելի լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծել կառուցապատման ընթացիկ ծրագրերի համար և որին տրվել է հետադարձ ուժ:

Հաշվի առնելով վերոնշյալը, ոլորտի կարևորությունն ու դերը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կառուցապատողների հետ քննարկումների արդյունքում մշակել և շրջանառության մեջ է դրել համապատասխան օրենսդրական նախաձեռնություն՝ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ (այսուհետ՝ նախագիծ), որն ուղղված է ոլորտի համար դրական իրավակարգավորումներ սահմանելուն:

Նկատի ունենալով մեր անդամ կազմակերպությունների փաստարկված մտահոգությունները, կարևորելով Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավումը, հաշվի առնելով կառուցապատման դերն ու նշանակությունը երկրի ՀՆԱ-ում՝ ձեր ուշադրությունն ենք հրավիրում նախագծով առաջարկվող խնդրի ու դրա լուծումների վրա և խնդրում ենք հնարավորինս աջակցել նախագծի հետագա ընդունման գործընթացին:

Խորին հարգանքով,

**Էլինա Մարկարյան
ԱԱՊՀ նախագահ**






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09.12.10/14503-2025

« 02 » 07 2025թ

«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում»
ՀԿ Նախագահ
Տիկին Էլինա Մարկարյանին

Հարգելի՛ տիկին Մարկարյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հունիսի 25-ի գրության՝ հայտնում ենք հետևյալը.

հարկ ենք համարում հիշատակել, որ էներգետիկ ըմպելիքների վերաբերյալ կարգավորումները նպատակ ունեն նպաստել հանրային առողջության և հատկապես երեխաների և երիտասարդների առողջության պահպանմանը, ինչպես նաև երիտասարդ տարիքում կոֆեինից և տաուրինից անձանց կախվածության դեպքերի նվազեցմանը: Ավելին, էներգետիկ ըմպելիքների օգտագործման հետևանքով հնարավոր ռիսկերի նվազեցման նպատակով՝ տարբեր երկրներ դրանց սահմանափակմանն ուղղված տարբեր քաղաքականություններ են մշակում: Մի շարք երկրներ արդեն իսկ քայլեր են ձեռնարկել երիտասարդ սերնդի առողջության պաշտպանության համար՝ սահմանափակելով երեխաների համար էներգետիկ ըմպելիքների վաճառքը և գովազդը:

Այս համատեքստում, վաճառքի ցուցադրված էներգետիկ ըմպելիքները առանձնացված սպառողական դարակաշարով (հատվածով)՝ «էներգետիկ ըմպելիք» նշումով ապահովված լինելու օրենքի պահանջը ունի կանխարգելիչ նշանակություն՝ նպատակ ունենալով բոլոր վաճառքի կետերում (անկախ առևտրային տարածքի մեծությունից) ապահովել դրանց ցուցադրությունը հստակ տարանջատված այլ ոչ ակոհոլային ըմպելիքներից՝ նվազեցնելու համար անչափահասների կողմից էներգետիկ ըմպելիքների ոչ գիտակցված սպառումը: Ինչ վերաբերվում է առանձնացված դարակաշարերի ապահովման մասով վերահսկողության պահանջին, ապա նշենք, որ էներգետիկ ըմպելիքների վերաբերյալ կարգավորումներով

դարակաշարի առկայության մասով վերահսկողությունը վերապահված է Տեղական ինքնակառավարման մարմիններին:

Անդրադառնալով «Գովազդի մասին» օրենքով նախատեսված էներգետիկ ընպելիքների գովազդի հեռարձակման ժամանակային տիրույթին՝ նշենք, որ այն ընտրվել է թունդ ակոհոլային խմիչքների կարգավորումների համատեքստում:

Միևնույն ժամանակ, Էկոնոմիկայի նախարարությունը ողջունում է Ձեր նախաձեռնությունը՝ ոլորտի լավարկմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու կապակցությամբ և հայտնում է իր պատրաստակամությունը քննարկելու միջազգային լավագույն փորձի վրա հիմնված և օրենսդրական դաշտի բարելավմանն ուղղված ցանկացած բավարար հիմնավորված առաջարկություն:

Հարգանքով՝

Գործարար միջավայրի
վարչության պետ

02.07.2025

X 

ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN KRISTINE 6209810874

ՔՐԻՍՏԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝

Ներքին առևտրի բաժնի պետ, Նաիրա Մուշեղյան

+37411597280

Ստորև նաև հղում է, որը տանում է Ներդրումների խորհրդի (Investment Council) կայք, որտեղ մասնավոր հատվածի տակ առաջինը նշված է հենց AmCham-ը:

[IC Armenia | Structure of SME Public-Private Dialogue Platform led by the Deputy Prime Minister](#)